ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 9—10-ին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը։

«ՍՄԿԿ XXVI համագումարը և գիտության զարգացման խնդիրները Հայաստանում» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

ՍՄԿԿ XXVI համագումարը, ասաց նա, իր քննարկած հարցերով և առաջադրած խնդիրների խորությամբ առաջին իսկ օրից իր վրա բևեռեց սովետական բոլոր մարդկանց, ինչպես նաև համաշխարհային բովանդակ հասարակայնության ուշադրությունը։ Համագումարին տրված կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ, որով հանդես եկավ ՍՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Լ. Ի. Բրեժնևը, իրենց վառ դրսևորումն են գտել անցյալ համագումարից հետո կուսակցության բաղմակողմանի գործունեությունը և մեր հասարակության հետագա զարգացման ուղենիշները։

ՍՄԿԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարներում, որպես մեր հետագա զարգացման առաջնակարգ գործոն նշվեց գիտության աճող դերը, նրա նշանակությունն արդի պայմաններում ինչպես հասարակական զարգացման, այնպես էլ նրա գոյության նյութական միջավայրի բնության պահպանման գործում։

Պրեզիդենտն ընդգծեց, որ Հայաստանում գիտությունը զարգացնելու համար անհրաժեշտ է ֆունդամենտալ հետազոտությունների պոտենցիալի ըստ ամենայնի բարձրացում, հետազոտությունների արդյունքների առավել արդյունավետ օգտագործում արտադրության մեջ, անհրաժեշտ է ունենալ սեփական գիտական դեմք։ Անցած տասնամյակներին հանրապետության գիտությունների ակադեմիայի ինստիտուտների մեծ մասը մշակել է իր որոշակի պրոֆիլը։

Անդրադառնալով գիտության արդի խնդիրներին, Վ. Համբարձումյանը նշեց ակադեմիական և ոչ ակադեմիական ինստիտուտների համագործակցության ուժեղացման, նրանց աշխատանքների կոորդինացման, գիտության տարբեր ճյուղերի արդյունավետ փոխազդեցության կարևորությունը։

Զեկուցողը հանգամանորեն կանգ առավ նաև հանրապետությունում գիտական նոր ուղղությունների զարգացման խնդիրների վրա, նշեց, որ անհրաժեշտ է զարկ տալ հասարակագիտության այնպիսի ճյուղին, ինչպիսին է հոգեբանությունը։ Հետագա զարգացման կարիք ունի իրավաբանական գիտությունը, որի դերը մեծ է օրենսդրության գիտական մշակման ու հիմնավորման գործում։ Լուրջ ուշադրություն պետք է նվիրել նաև բնական գիտությունների նորագույն այնպիսի ուղղություններին, ինչպիսիք են կենսաֆիզիկան, կիրառական ֆիզիկան։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1980 թ. և 10-րդ հնգամյակի տարիների գիտական ու գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիայի թղթակից անդամ Գ. Գալոյանը։ Նշելով մաթեմատիկոսների, ֆիզիկոսների, մեխանիկների, քիմիկոսների, երկրաբանների, գիտության մի շարք այլ բնագավառների աշխատողների հաջողությունները, նա ընդգծեց, որ գիտահետազոտական ինստիտուտների կոլեկտիվների ջանքերը ուղղված են եղել հիմնարար գիտությունների նոր ուղղությունների հետագա զարգացմանը, հետազոտությունների որակի և արդյունավետության բարձրացմանը, ժողովրդատնտեսական առաջնահերթ նշանակություն ունեցող գիտական պրոբլեմների մշակման մասին ՍՄԿԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարների որոշումների կատարմանը։

Այնուհետև զեկուցողը նշեց, որ անցած հնգամյակում զգալի աշխատանքներ են կատարվել հասարակական գիտությունների գծով։ Լույս են տեսել «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի վեց հատորները, կազմվել է մինչև 1990 թ. Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտե-

սական զարգացման կարևորագույն ուղղություն-ների մասին զեկուցագիրը, ավարտվել է «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» տպագրությունը, ստեղծվել են հնագիտության և ազգագրության, արևելագիտության, գրականության և արվեստի, փիլիսոփայության և իրավունքի վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ։ 1976—1980 թթ. ակադեմիայի հրատարակչությունը ընթերցողներին է հանձնել 543 անուն գիրք, լույս է տեսել ավելի քան վեց հազար գիտական հոդված։

Էլ ավելի են ընդլայնվել գիտությունների ակադեմիայի միջազգային կապերը։ Նրա ինստիտուտները արտասահմանյան գիտական հիմնարկների հետ հետազոտություններ են կատարել 49 պրոբլեմների ուղղությամբ, գիտական կապեր են պահպանում 48 երկրների գիտնականների հետ։

Այնուհետև տեղի ունեցավ զեկուցումների քննարկում, որին մասնակցեցին Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Հ. Մաղաքյանը, Երևանի ֆիզիկայի ինստիտուտի դիրեկտոր Ա. Ամատունին, Սևանի ջրակենսաբանական կայանի դիրեկտոր Ռ. Հովհաննիսյանը, ակադեմիայի փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Գ. Բրուտյանը, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Մանվելյանը։

«Գիտության նվաճումները և Հայկական ՍՍՀ քարի պաշարների օգտագործումը» թեմայով զեկուցեց հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Մ. Սիմոնովը։

Հանդես գալով ժողովում, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ, հանրապետության գիտությունների ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը նշեց, որ ՍՄԿԿ XXVI համագումարի պահանջներից ելնելով, պետք է էլ ավելի մեծ տեղ տալ ժողովրդական տնտեսության համար կատարվող մշակումների արտադրական ներդրմանը։ Այս գործում հանրապետության գիտությունների ակադեմիան պետք է իր որոշակի դերը խաղա։

Ընկ. Ֆ. Սարգսյանը ակադեմիայի գիտնականների ուշադրությունը հրավիրեց Զանգեզուրի և Քաջարանում հանքարդյունաբերության մնացուկների, Արարատի շրջանի ցեմենտի բարձրորակ հումքի ուսումնասիրման և օգտագործման հարցերի վրա։ Դա հնարավորություն կտա ոչ միայն զգալիորեն ավելացնելու այդ շինանյութի արտադրությունը, այլև կնպաստի բնության պահպանությանը։

Ընդհանուր ժողովում տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պարգևների հանձնում։ Արդյունավետ գիտական գործունեության համար Մեծարման գիր հանձնվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Մ. Սիմոնովին։ Գիտության զարգացման գործում ներդրած խոշոր ավանդի համար Վաստակագիր ստացան Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը, ակադեմիայի թղթակից անդամներ Է. Ջրբաշյանը, Ա. Աբրահամյանը, ինչպես նաև տեխնիկական գիտությունների թեկնածու Ռ. Սարոսյանը, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու Կ. Շիրինյանը։ 1980 թվականին գիտահետազոտական հաջող գործունեության համար գիտաշխատողների մի մեծ խմբի տրվեցին Գովեստագրեր։

Ժողովը լսեց կազմակերպական հարցեր։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի վիցեպրեզիդենտ ընտրվեց հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Իոսիֆյանը։

Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ